


**Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում  
2021թ. հունվար-հուլիսին՝**

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2021թ. հուլիսը 2020թ. հուլիսի նկատմամբ) կազմել է 8.2%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ գրանցվել է 0.5% գնանկում:

Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՄԸՆԳ) երկու նիշ մակարդակ	2021թ.			
	հուլիսը		հունվար-հուլիսը	հուլիսը
	2020թ. հուլիսի նկատմամբ, %	2021թ. հունիսի նկատմամբ, %	հունվար-հուլիսի նկատմամբ, %	2020թ. հուլիսի նկատմամբ
00 Սպառողական գների ինդեքս-ընդամենը այդ թվում՝	8.2	-0.5	6.1	103.3
01 սննդամթերք և ոչ ակոհոլային խմիչք	13.5	-1.4	8.5	103.9
02 ակոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	9.2	0.5	9.1	108.2
03 հագուստ և կոշիկ	8.1	-1.3	5.5	103.3
04 բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրական էներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	1.1	0.2	1.1	100.3
05 տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	9.3	-0.2	8.5	106.7
06 առողջապահություն	5.9	-0.2	6.1	103.8
07 տրանսպորտ	11.8	0.2	9.7	104.2
08 կապ	0.9	-0.1	0.9	100.8
09 հանգիստ և մշակույթ	0.7	0.6	1.5	105.2
10 կրթություն	2.1	0.0	2.1	100.0
11 ռեստորաններ և հյուրանոցներ	2.9	0.6	2.9	103.9
12 տարբեր ապրանքներ և ծառայություններ	4.0	-0.3	4.5	102.4

**Սպառողական գների փոփոխությունները 2021թ. հուլիսին 2015թ. նկատմամբ \*\***




\* Սույն հաղորդագրությունում հիմնականում տրված է Հայաստանի Հանրապետությունում 2021թ. հուլիսի գնային փոփոխությունների հակիրճ մեկնաբանությունը: Սպառողական գների ինդեքսների ավելի ընդարձակ տեղեկատվությունը գետեղվում է «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում» ամսական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-305):

\*\* Եվրոստատի կողմից սահմանված ինդեքսի հիման ժամանակաշրջան:


Ենթաինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2021թ. հուլիսին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)

%



Ենթաինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2021թ. հուլիսին (նախորդ ամսվա նկատմամբ)

%




Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի

	2021թ.			
	հուլիսը		հունվար-հուլիսը 2020թ. հունվար-հուլիսի նկատմամբ,%	հուլիսը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ
	2020թ. հուլիսի նկատմամբ,%	2021թ. հունիսի նկատմամբ,%		
Սպառման ապրանքներ	12.0	-0.8	8.4	104.5
<i>այդ թվում՝</i>				
անդամները, խմիչք և ծխախոտ	13.1	-1.2	8.5	104.4
ոչ պարենային ապրանքներ	9.6	-0.2	8.2	104.8
Ծառայություններ	1.8	0.1	1.9	101.1

Սպառողական գների հավելաճը 2012-2021թթ. հուլիսին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %



2021թ. հունվար-հուլիսին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.5% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 0.15% նվազում):


Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2021թ. հուլիսին հունիսի համեմատ սպառողական գները նվազել են 0.9-0.2%-ով, այդ թվում, գնանկման համեմատաբար բարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում սպառողական գները նվազել են 0.6%-ով:

**Սննդամթերքի գներ:** 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 13.5% գնաճ, իսկ 2021թ. հունիսի համեմատ՝ 1.4% գնանկում: Վերջինիս մեծապես նպաստել են մրգի, յուղերի և ճարպերի, բանջարեղենի, շաքարի և շաքարավազի ապրանքախմբերում գրանցված 13.0-2.1% գնանկումը:

Մրգի ապրանքախմբում<sup>1</sup> 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ արձանագրվել է 11.8%, իսկ 2021թ. հունիսի համեմատ՝ 13.0% գնանկում:

Մրգի գների փոփոխությունները 2019-2021թթ. հունվար-հուլիսին


նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



<sup>1</sup> 2021թ. հունիս-հուլիսին 2020թ. հունիս և հուլիս ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների ինդեքսների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

Բանջարեղենի ապրանքախմբում<sup>1</sup> 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ արձանագրվել է 53.1% գնաճ, իսկ 2021թ. հունիսի համեմատ՝ 2.5% գնանկում:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2019-2021թթ. հունվար-հուլիսին նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



**2021թ. հուլիսին հունիսի համեմատ մրգի և բանջարեղենի ապրանքախմբերի ընդհանուր գնանկումը կազմել է 7.1%: Վերը նշված ապրանքախմբերը սպառողական զամբյուղում ունենալով 8.35% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի նվազմանը 0.6 տոկոսային կետով:**

Յուղերի և ճարպերի ապրանքախմբում 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ արձանագրվել է 33.8% գնաճ, իսկ 2021թ. հունիսի համեմատ՝ 2.8% գնանկում (արևածաղկի բուսական յուղի միջին գնաճը 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ կազմել է 75.2%, իսկ 2021թ. հունիսի համեմատ գրանցվել է 7.0% գնանկում):

Շաքարի և շաքարավազի ապրանքախմբում 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ գրանցվել է 39.4% գնաճ, իսկ 2021թ. հունիսի համեմատ՝ 2.1% գնանկում:

Կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ գրանցվել է 12.1% գնաճ, իսկ 2021թ. հունիսի համեմատ՝ 0.5% գնանկում: Ջվի գինը 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ աճել է 51.3%-ով, իսկ 2021թ. հունիսի համեմատ գրանցվել է 2.3% գնանկում:

Չկան և ծովամթերքի ապրանքախմբում 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ արձանագրվել է 23.8%, իսկ 2021թ. հունիսի համեմատ՝ 3.0% գնաճ (<<Իշխան>> ձկնատեսակի գնաճը 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ կազմել է 27.5%):

2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ մսամթերքի ապրանքախմբում գրանցվել է 9.7%, իսկ 2021թ. հունիսի համեմատ՝ 1.8% գնաճ (խոզի մսի գնաճը 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ կազմել է 32.2%):

Ալկոհոլային խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների ապրանքախմբում 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ արձանագրվել է 9.2%, իսկ 2021թ. հունիսի համեմատ՝ 0.5% գնաճ: Ալկոհոլային խմիչքի գնաճը 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ կազմել է 8.6%, 2021թ. հունիսի համեմատ՝ 0.1%, իսկ ծխախոտային արտադրատեսակներինը՝ համապատասխանաբար 10.3% և 1.2%:

2021թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է հացաբուլկեղենի և ձավարեղենի՝ 0.3%, սուրճի, թեյի, կակաոյի, ոչ ալկոհոլային խմիչքի՝ 0.4% գնաճ:

**Ոչ պարենային ապրանքների գներ:** 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 9.6% գնաճ, իսկ 2021թ. հունիսի համեմատ՝ 0.2% գնանկում:


2021թ. հուլիսին հունիսի համեմատ ոսկերչական զարդերի գները նվազել են 3.3%-ով, հագուստինը՝ 1.4%-ով, տարբեր տեսակի կոշիկներինը՝ 1.2%-ով, դեղագործական ապրանքներինը՝ 0.5%-ով, գորգերինը և

հատակի ծածկերինը, մաքրող, լվացող միջոցներինը՝ 0.3%-ով, խոշոր կենցաղային սարքերինը, բնակարանի նորոգման և սպասարկման նյութերինը՝ 0.2%-ով, կահույքինը և կահավորանքինը, գրասենյակային պարագաներինը՝ 0.1%-ով: Միաժամանակ, հանրապետությունում գրանցվել է ապակե ամանեղենի, ճաշասպասքի և տնային կահ-կարասու, կենցաղային և այգեգործական գործիքների՝ 0.2%, վառելանյութերի և քսանյութերի 0.8% գնաճ:

2021թ. հուլիսին հունիսի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են 2.3% և 1.1%-ով: 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 56.8% և 43.6%, իսկ 2020թ. դեկտեմբերի համեմատ՝ 32.1% և 39.5% գնաճ:

Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2018-2021թթ.

2015թ. նկատմամբ




**Ծառայությունների սակագներ:** Մատուցված ծառայությունների ոլորտում 2021թ. հուլիսին 2020թ. հուլիսի համեմատ արձանագրվել է սակագների 1.8%, իսկ 2021թ. հունիսի համեմատ՝ 0.1% հավելաճ:

2021թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է սպասարկման ծառայությունների՝ 0.3%, հանգստի և մշակութային միջոցառումների հետ կապված ծառայությունների՝ 0.7%, հյուրանոցային ծառայությունների՝ 1.4%, հանգստի կազմակերպման ծառայությունների սակագների 1.6% հավելաճ: Դրան զուգընթաց, տրանսպորտային ծառայությունների սակագների մակարդակը նվազել է 1.4%-ով (պայմանավորված օդային տրանսպորտով միջազգային չվերթների ծառայությունների սակագների 5.4% նվազումով), իսկ կենցաղային սարքերի նորոգման, բնակարանի նորոգման և սպասարկման, վարսավիրանոցների և անձնական սպասարկման սրահների, բժշկական ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

**Արտարժույթի շուկա:** 2021թ. հուլիսին հունիսի համեմատ սպառողական և արտարժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 0.5% և 4.3% նվազում (ՀՀ դրամն արժևորվել է): 2021թ. հուլիսին 2020թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցված սպառողական գների 3.3% գնաճն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 5.4% նվազումով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է սպառողական գների 1.1% նվազում և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1.3% հավելաճ: 2021թ. հուլիսին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 490.9 դրամ, ինչը 1.3%-ով բարձր է 2020թ. հուլիսի համապատասխան ցուցանիշից (484.6 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ



Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների տոկոսային փոփոխությունները ՀՀ-ում

	2021թ.			
	հունիսը		հուլիսը	
	2021թ. մայիսի նկատմամբ	2020թ. հունիսի նկատմամբ	2021թ. հունիսի նկատմամբ	2020թ. հուլիսի նկատմամբ
Խնձոր	-21.7	-37.7	-15.3	-41.2
Տանձ	21.7	32.2	-27.2	-0.4
Ծիրան	-23.7	-7.2	-29.0	-1.1
Դեղձ	5.4	16.5	-43.0	-14.6
Աղամաթուզ (բանան)	-11.7	-3.5	-11.4	12.7
Նարինջ	1.5	8.2	3.7	10.9
Կիտրոն	6.6	-12.0	2.7	-1.6
Ձմերուկ	-11.6	2.1	-46.0	-3.2
Ելակ	-9.5	24.1	3.8	3.9
Կաղամբ	69.4	188.4	22.8	236.3
Կանաչ սոխ	28.9	44.6	34.5	103.6
Խառը կանաչեղեն	-8.0	13.1	-2.9	25.4
Լոլիկ	-38.5	-4.7	-47.4	-35.7
Վարունգ	-41.0	-37.5	80.7	104.5
Սմբուկ	-12.3	0.1	-69.6	-14.4
Պղպեղ	-36.7	7.9	-36.7	4.7
Կանաչ լոբի	-51.9	-10.2	-23.7	11.6
Գազար	15.7	81.0	-7.6	180.9
Ճակնդեղ	68.7	98.6	-22.1	142.7
Գլուխ սոխ	-8.3	16.6	-12.8	39.1
Սխտոր	1.1	11.7	4.3	17.1
Սունկ	-0.6	22.8	6.3	33.1
Կարտոֆիլ	-23.7	-18.9	8.9	38.4

Մաշտոռական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում

	2020թ. դեկտեմբերի 2019թ. դեկտեմբերի նկատմամբ	2021թ.							հունիսը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ
		հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը		
		նախորդ ամսվա նկատմամբ							
Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ)	105.4	100.7	100.8	100.7	100.6	100.7	100.8	104.4	
Հայաստան	103.7	102.2	100.6	101.0	101.3	99.6	99.2	103.8	
Ռուսաստան	104.9	100.7	100.8	100.7	100.6	100.7	100.7	104.2	
Բելառուս	107.4	101.1	101.9	100.7	100.7	100.6	100.7	105.8	
Ղազախստան	107.5	100.6	100.7	100.6	100.9	100.7	101.1	104.6	
Ղրղզստան	109.7	101.0	101.1	101.1	100.9	100.8	102.3	107.3	
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-27) <sup>1</sup>	100.2	100.3	100.3	100.8	100.6	100.3	100.2	102.5	
Ավստրիա	101.0	99.3	100.3	101.2	100.1	100.2	100.2	101.4	
Բելգիա	100.4	99.1	101.2	100.9	100.2	100.3	100.4	102.2	
Բուլղարիա	100.0	100.2	100.5	100.2	100.7	100.1	100.0	101.7	
Հունգարիա	102.8	100.9	100.7	100.8	100.8	100.6	100.4	104.3	
Գերմանիա	99.3	101.4	100.6	100.5	100.5	100.3	100.4	103.6	
Հունաստան	97.6	98.7	100.2	101.0	100.9	99.7	101.2	101.7	
Դանիա	100.4	100.2	100.5	100.1	100.5	100.3	100.1	101.7	
Իռլանդիա	99.0	100.2	100.3	100.9	100.6	100.2	100.1	102.3	
Իսպանիա	99.4	99.6	99.4	101.9	101.1	100.5	100.5	103.0	
Իտալիա	99.7	99.1	99.8	101.8	100.9	99.9	100.2	101.6	
Կիպրոս	99.2	99.2	100.1	101.4	100.8	100.4	101.0	103.0	
Լատվիա	99.5	100.4	100.4	100.8	100.9	100.6	100.3	103.4	
Լիտվա	99.9	100.5	100.3	101.0	101.0	100.5	100.5	103.8	
Լյուքսեմբուրգ	99.7	100.9	99.4	101.8	100.0	100.4	100.3	102.8	
Մալթա	100.2	98.7	100.5	101.0	102.9	101.3	101.4	105.8	
Նիդերլանդներ	100.9	99.3	101.2	100.3	100.8	100.1	100.1	101.9	
Լեհաստան	103.4	100.9	100.5	100.9	100.7	100.4	100.1	103.6	
Պորտուգալիա	99.7	99.7	99.5	101.5	100.5	100.3	100.2	101.8	
Ռումինիա	101.8	100.9	100.4	100.4	100.4	100.6	100.2	103.0	
Սլովակիա	101.6	100.3	100.3	100.6	100.2	100.6	100.4	102.3	
Սլովենիա	98.8	99.7	100.2	100.6	100.8	100.7	100.4	102.4	
Ֆինլանդիա	100.2	100.4	100.3	100.3	100.4	100.0	99.9	101.4	
Ֆրանսիա	100.0	100.3	100.0	100.7	100.2	100.3	100.2	101.7	
Խորվաթիա	99.7	100.1	100.2	101.0	100.5	100.1	100.4	102.4	
Չեխիա	102.4	101.3	100.2	100.2	100.6	100.1	100.4	102.8	
Շվեդիա	100.6	99.9	100.3	100.1	100.3	100.2	100.1	101.0	
Էստոնիա	99.1	100.5	100.9	99.7	100.4	101.0	101.2	103.8	
Այլ երկրներ									
Կանադա	100.7	100.6	100.5	100.5	100.5	100.5	100.3	...	
Նորվեգիա	101.4	101.1	100.8	99.7	100.3	99.8	100.4	102.3	
Միացյալ Թագավորություն	...	99.8	100.1	100.3	100.6	100.6	100.5	...	
ԱՄՆ	101.4	100.5	100.7	100.9	101.0	101.0	101.1	105.3	
Թուրքիա	114.6	101.7	100.9	101.1	101.7	100.9	101.9	108.4	
Ուկրաինա	105.0	101.3	101.0	101.7	100.7	101.3	100.2	106.4	
Մոլդովա	100.4	100.5	100.4	101.0	101.5	100.5	100.1	103.9	
Վրաստան	102.4	101.1	101.1	104.2	100.9	100.7	100.7	108.9	
Շվեյցարիա	99.0	100.0	100.1	100.2	100.3	100.2	100.0	100.8	
Ճապոնիա	98.8	100.5	100.0	100.2	99.6	100.3	100.2	...	

... - Տվյալները բացակայում են:

<sup>1</sup> Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«Մաշտոռական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2021թ. հունվար-օգոստոսին» մամուլի հաղորդագրության հրատարակման ժամկետը, համաձայն «2021 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2021թ. սեպտեմբերի ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-305, Մաս 3, էջ 131):